

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կոմիտասի թանգարան–ինստիտուտի տարեգրքի Գ հատորը նվիրված է Կոմիտասի (1869–1935) ժառանգության, ինչպես նաև նրա գործունեության գերակա ուղղությունների՝ ժողովրդական և միջնադարյան հոգևոր երաժշտության հետազոտությանը: Ներկայացվում են Կոմիտասի բանաստեղծական ժառանգության մեջ դրսևորվող նորաբանությունները, Կոմիտասի գիտական, գեղագիտական, մեթոդական և ստեղծագործական որոշ մոտեցումներ, հայոց «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածները, «Լոյս զուարթ» հոգևոր երգի ժողովրդական կատարումներին առնչվող հարցեր: Քննարկվում են Կոմիտասի պատմական մեթոդը, կոմիտասյան պոլիֆոնիան, «Բժշկութիւն երաժշտութեամբ» հողվածի դրույթները, Կոմիտասի կենսագրությանն առնչվող նոր հանգամանքներ՝ ըստ հունական մի բնագրի: Հոգևոր երաժշտության ոլորտից հատորում տեղ են գտել ինչպես հայկական, այնպես էլ ռուսական արվեստին առնչվող հարցեր, այդ թվում՝ ռուսական միջնադարյան երաժշտության մեջ Սբ. Գրիգոր Լուսավորչին նվիրված մեղեդիները, աստվածաշնչյան մեջբերումների երաժշտական մեկնաբանությունը հին ռուսական երգչական արվեստում, հայ հոգևոր երգարվեստի Երուսաղեմի երգվածքը, Հովհան Օձնեցու երաժշտական ժառանգությունը, Մակար Եկմալյանի ստեղծագործական անդրադարձը Հայոց Պատարագին: Եվս մեկ բաժին նվիրված է օտար կոմպոզիտորների ստեղծագործություններում հայկական թեմատիկայի և հայ երաժշտության կիրառումներին:

Հոդվածների հեղինակները Հայաստանի, Ռուսաստանի և Չեխիայի հեղինակավոր գիտական և կրթական հաստատություններ ներկայացնող հետազոտողներ են:

Հատորը հասցեագրված է ինչպես գիտնականներին, մասնագետներին և ուսանողներին, այնպես էլ՝ Կոմիտասի գործունեությամբ և ժողովրդական ու հոգևոր երաժշտական մշակույթով հետաքրքրվողների լայն շրջանակներին:

## INSTEAD OF A PREFACE

The Third Volume of the Komitas Museum-Institute Yearbook is devoted to the exploration of Komitas's (1869-1935) legacy, as well as to folk music and the medieval chant, which were the priority directions of his activity. The neologisms in Komitas's poetry, a number of his scientific, aesthetical, methodical and creative approaches, the Armenian epic songs and the folk performances of the sacred chant *Luys Zvart'* are presented in the Volume. Komitas's historical method, his polyphonic style, theses derived from his article *Healing with Music*, some new details on his biography according to a Greek source are also discussed. In the field of sacred chants, the Volume covers issues related to both Armenian and Russian art, among which being Russian medieval chants dedicated to St. Gregory the Illuminator of Armenia, the musical interpretation of the biblical references in old Russian chants, the Jerusalem Chant of Armenian sacred music, the music legacy of Hovhan Odznetsi (VII century) and Makar Yekmalyan's (1856-1905) creative reference to Armenian Divine Liturgy. A chapter is dedicated to the references to Armenian subjects and Armenian music by non-Armenian composers.

The authors of the articles are researchers from various prominent institutions in Armenia, Russia and the Czech Republic.

The Volume is addressed to scholars, specialists and students and reaches out to a wider range of readers, interested in Komitas's activity, folk and medieval culture.